

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 2008Թ. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՑԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂ ԿՈՂՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ռ. ԹՈՐՈՍՅԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Հիմք ընդունելով, որ սահմանադրական դատարանի լրատվական ծառայությունը գործի քննության ընդունման վերաբերյալ տարածել է անհրաժեշտ տեղեկատվություն,
- հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանում գործի դատաքննությունն իրականացվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ գործի հրապարակային քննության բոլոր պահանջներին համապատասխան,
- նկատի ունենալով, որ գործի դատաքննության մասին սահմանադրական դատարանը կհրապարակի պաշտոնական տեղեկատվություն,
- համարելով, որ միջնորդությամբ առաջ են քաշվում սույն գործի դատաքննության առարկայից դուրս հարցեր,
Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

Մերժել ներկայացված միջնորդությունը (տեքստը կցվում է):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11 փետրվարի 2008 թվականի
ՍԴԱՌ-15